ԳԱՐԵԳԻՆ Ա
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ
«Ս. ՍԱՀԱԿ-Ս. ՄԵՍՐՈՊ»
ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵՑ
ԽՐԻՍՏՈՍ ԼԱՄՊՐԱՔԻՍԻՆ

ՍԻՐԵՑԵԱԼ ՍՊԱՍԱՒՈՐԻՆ
ՀԵԼԼԵՆԱԿԱՆ ԴՊՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՄՇԱԿՈՅԹԻ
ՏԻԱՐ ԽՐԻՍՏՈՍ ԼԱՄՊՐԱՔԻՍ
ՈՐ ՅԱԹԷՆՔ, Ի ՅՈՒՆԱՍՏԱՆ

Սրտի խոր գոհունակութեամբ տեղեկացանք Յունահայոց Թեմի բարեջան Առաջնորդ՝ Գերշ. Տ. Ոսկան Արքեպիսկոպոս Գալփաքեանէն Ձեր բազմամեայ, բազմաճիւղ և բազմաբեղուն ծառայութեանց մասին, զորս այնքան սիրով և նուիրումով մատուցած էք Հելլէն ժողովուրդին թէ՛ մամուլի, թէ՛ գրականութեան, թէ՛ արուեստի և այլ բնագաւառներուն մէջ:

Վերջերս անհուն ուրախութեամբ իմացանք Ձեր հովանաւորած Արուեստի Համալիրին՝ ՄԵԿԱՐՈՆԻ երաժշտական կեդրոնին միջոցաւ հայկական մշակոյթի և արուեստի հետ Ձեր ստեղծած նոր և բարոք յարաբերութեանց զարգացման մասին: Վստահաբար, այդ փոխ-հաղորդակցութիւնները պիտի դառնան փոխադարձ հարստացման գեղեցիկ առիթներ Հելլեն և Հայ ժողովուրդներու շարունակական եղբայրական գործակցութեան զարգացման տեսակետէն:

Ի գնահատութիւն Ձեր բազմօգուտ ծառայութիւններուն և քաղաքակրթական նուաճումներուն՝ այսու Հայրապետական Կոնդակաւ Ձեզի կը շնորհենք Հայց. Եկեղեցւոյ Հոգեւոր Կեդրոնին՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի շքանշանը

Ս. ՍԱՀԱԿ-Ս. ՄԵՍՐՈՊ:

Կ'աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ Ձեզի և Ձեր գործակիցներուն պարգևէ քաջառողջ և երկար կեանք և նորանոր իրագործումներ հելլենական և հայկական մշակոյթներու փոխ-յարաբերութեան այնքան կարևոր բնագաւառին մէջ:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն, և յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 2 Ապրիլի
Ցամի Տեառն 1998 և ի թուին Հայոց ՌՆԽԷ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
Ընդ համարաւ Է/157